«Հաստատում եմ»

ԵՊՀ պրոռեկտոր

ԿԱՐՈՒՔ

Քանաքարա Հայրապետյանի «Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը (1901-1938 թվականներին» Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի 2024 թ. հունվարի 17-ի նիստում (արձանագրություն 7 թիվ): **Նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Ա. Ն. Հայրունին, Ա. Ա. Ներսիսյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Վ. Ա. Հակոբյանը, Ք. Ժ. Յախշյանը, Տ. Կ. Գևորգյանը, Մ. Ա. Մալխասյանը, Տ. Հ. Ղանալանյանը, Մ. Գևորգյանը, Լ. Մակարյանը:**

Քանաքարա Հայրապետյանի ատենախոսությունը նվիրված է ցայսօր, ինչ-որ առումով, պատմագիտության տեսադաշտից դուրս մնացած Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի կյանքի և գործի ուսումնասիրությանը, մի անձնավորության, որի հատկապես կաթողիկոսական շրջանի ազգանպաստ գործունեությունը մշուշապատ էր, իսկ նրա կյանքի որոշ դրվագներին նախկինում տրված գնահատականները՝ հակասական և իրարամերժ: Ի սկզբանե արձանագրենք, որ հեղինակին հիմնականում հաջողվել է իրեն հասանելի սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ ամենայն մանրամասնությամբ լուսաբանել ազգանվեր և ողբերգական գործչի գործունեության՝ 1901-1938 թթ. ընդգրկող ժամանակահատվածը և, հիմնականում զերծ մնալով ռոմանտիկայից ու դավադրությունների տեսություններից, տալ անաչառ և անկողմնակալ գնահատականներ, հստակեցնել շատ հարցեր, մշակել ընդունելի հայեցակարգեր և հանգել սպառիչ եզրակացությունների:

Հարուստ փաստերի ուսումնասիրությամբ հեղինակը կարողացել է ապացուցել, որ Խորեն Մուրադբեկյանն, իրոք, 20-րդ դարի առաջին տասնամյակում, իր իսկ արտահայտությամբ «իր կարևոր նպաստը և ավանդն է բերում ոչ միայն Նոր Բայազետի գավառի, այլև Գորիի հայ բնակչության սոցիալական վիճակի, հոգևոր, կրթական մակարդակի բարձրացմանը», որ նա ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ բարեկարգիչ էր, այլև կրթության ու մշակույթի անձնուրաց մշակ, մի կոչում, որը նա պահում է նաև Երևանի փոխտեղակալության շրջանում:

Նորահայտ փաստերի հիմամբ Ք. Հայրապետյանը հիմնավորում է, որ հոգևոր գործունեության վաղ շրջանում Խորեն Մուրադբեկյանն իրեն դրսևորել է որպես Հայ առաքելական եկեղեցու իրավունքների պաշտպան, մարտնչող հոգևորական, ով եկեղեցական գույքի բռնագրավման մասին օրենքի դեմ զանգվածային ցույցերին մասնակցելու համար ենթարկվել է աքսորի՝ ցարական իշխանությունների աչքում պահելով ըմբոստ հոգևորականի կերպարը:

Մի շարք փաստաթղթերի քննությամբ հեղինակը հանգել է այն տեսակետին, որ Խորեն Մուրադբեկյանը չի եղել դաշնակցական, այլ «ժամանակի առաջադեմ լիբերալ գործիչ էր և կողմ էր եկեղեցու բարեկարգմանը՝ ժամանակի պահանջին համապատասխան»:

Կարևորում ենք, որ Խորեն վարդապետի գործունեությունը Երևանի փոխթեմակալության առաջին շրջանում հեղինակը լուսաբանել է ոչ միայն հոգևոր ու կրթամշակութային, այլև առկա սոցիալական խնդիրների լուծման տեսանկյուններից: Այսինքն՝ ըստ նրա՝ Խ. Մուրադբեկյանն ավելի լայն նպատակների գործիչ էր:

Ատենախոսի ուշադրությունից դուրս չեն մնացել նաև Առաջին աշխարհամարտի տարիները, երբ Խորեն Մուրադբեկյանի ուշադրության կիզակետում էին ոչ միայն տեղի հայ բնակչության անվտանգության, այլև՝ արևմտահայ գաղթականների փրկության, պահպանության խնդիրները, որոնք լուծելու համար նա եռանդուն գործունեություն է ծավալել Էջմիածնի և Երևանի եղբայրական օգնության հանձնաժողովներում: Նա նաև լուրջ դերակատարում է ունեցել 1917 թ. նոյեմբերի վերջին Երևանի Հայոց ազգային խորհրդի ստեղծման գործում, մարմին, որի ձեռքում էր նախ՝ Երևանի նահանգի, ապա՝ նորահռչակ Հայաստանի հանրապետության ղեկը՝ մինչև 1918 թ. հուլիսի 19-ին Առաջին

հանրապետության կառավարության Թիֆլիսից Երևան ժամանումը: Ներկայացնելով հայ գաղթականներին աջակցելու, որբերին խնամելու և Երևանի նահանգին վերաբերող շատ այլ հարցեր լուծելու ուղղությամբ Խ. Մուրադբեկյանի եռանդուն գործունեությունը, ատենախոսն արձանագրում է այդ շրջանում նրա սերտ համագործակցությունը Արամ Մանուկյանի հետ: Ատենախոսը նաև իրավացիորեն արձանագրում է, որ Խորեն եպիսկոպոսի ջանքերի շնորհիվ էր, որ Մայր Աթոռն Առաջին հանրապետության տարիներին Սփյուռքում ունեցավ իր ներկայացուցիչը:

Ատենախոսության մեջ առանձին տեղ է գրավում Հայաստանի խորհրդայնացումից հետո Խորեն արք. Մուրադբեկյանի գործունեության լուսաբանումը: Շեշտվում է, որ 1920-1923 թթ. Երևանի փոխթեմակալության հոգևոր և հասարակական գործունեությունից զատ, նրա հիմնական պարտականությունն էր դարձել Հայոց եկեղեցու իրավունքների և սեփականության պաշտպանության հարցերի կարգավորումը: Ատենախոսն արձանագրում է, որ դառնալով իշխանությունների մոտ կաթողիկոսի կողմից լիազորված ներկայացուցիչ և այդ կարգավիճակով հարաբերվելով պետական մարմինների հետ, Խորեն Մուրադբեկյանը, ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում, դատելով իրատեսորեն, խորհրդային իշխանության նկատմամբ որդեգրել է օրինապահ կեցվածք և կողմ էր եկեղեցու հարմարվողականությանը և որոշակի փոխզիջումների, ինչը պետք է համարել ճիշտ և դրվատելի: Նույն իրատեսությամբ նա գործել է նաև 1924 թ. հունվարին՝ Գերագույն հոգևոր խորհրդի հիմնադրումից հետո՝ արդեն որպես կաթողիկոսի տեղապահ, խիստ բարդ ու հակասական պայմաններում շարունակելով ոչ միշտ հաջողված բանակցությունները խորհրդային իշխանության բարձրաստիճան պաշտոնյաների հետ և փորձելով լուծում տալ Հայոց եկեղեցու համար կարևորագույն խնդիրներին: Անշուշտ, այս առումով ատենախոսության նյութը միանգամայն արդիական է:

Հետաքրքիր և փաստարկված է ներկայացված նաև Գևորգ Ե Սուրենյանցի մահից երկու տարի անց Ս. Էջմիածնում գումարված Ազգային եկեղեցական ժողովի կողմից (1932 թ. նոյեմբերի 12-ին) կաթողիկոս ընտրվելուց հետո Խորեն Ա Մուրադբեկյանի ծավալած գործունեությունը: Արժևորվել են այդ անչափ բարդ շրջանում, մինչև իր առեղծվածային մահը, ի պաշտպանություն Հայ առաքելական եկեղեցու նրա ձեռնար-

կած քայլերը, հատկապես Սփյուռքում տիրող պառակտիչ, ներկուսակցական պայքարին վերջ տալու, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու նոր թեմեր հիմնելու ջանքերը: Մյուս կողմից, ատենախոսն իրավացիորեն արձանագրում է, որ եկեղեցու նկատմամբ իշխանությունների որդեգրած բռնաճնշումների քաղաքականության պայմաններում Խորեն Ա-ի հովվապետության տարիներին այդպես էլ չի հաջողվել իրականություն դարձնել Հայ առաքելական եկեղեցու բարեկարգության վերջնական ծրագրի հաստատումն ու կենսագործումը: Միանգամայն ճիշտ է նաև նրա այն եզրահանգումը, որ հաջողություն չեն ունեցել նաև եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները հնարավորինս կարգավորելու և կայուն հիմքերի վրա դնելու կաթողիկոսի ջանքերը: Իշխանությունները շարունակում էին զանգվածաբար ձերբակալել հոգևորականներին, փակել եկեղեցիները: Եկեղեցին թեև չի վերացվում, բայց դրվում է կոմունիստական ղեկավարության խստագույն վերահսկողության տակ:

Հետաքրքիր և ինքնուրույն են հեղինակի մոտեցումները կաթողիկոսի մահվան առեղծվածի բացահայտման և դրա ունեցած հետևանքների գնահատման տեսանկյունից: Միանգամայն ճիշտ է նրա այն եզրահանգումը, որ. «Ի դեմս Ամենայն հայոց Խորեն Ա կաթողիկոսի՝ Հայ առաքելական եկեղեցին կորցրեց իր արժանավորագույն և հայրենանվեր հոգևորականներից մեկին, ով իր ողջախոհ, արդար, անձնուրաց հոգևոր-հասարակական գործունեությամբ իրավամբ վաստակեց ազգաշեն ու ազգապահպան գործչի բարձր կոչումը»:

Վերոշարադրյալ նյութն ամբողջացնելով կարող ենք արձանագրել, որ հրապարակային պաշտպանության ներկայացվող աշխատանքն ընդհանուր առմամբ հաջողված է, գրագետ, տեսակետները փաստարկված, հեղինակն էլ արժանի է իր հայցած գիտական կոչմանը: Ներկայացված դրական կողմերով հանդերձ պաշտպանության ներկայացված ուսումնասիրությունը, սակայն, զերծ չէ որոշակի թերություններից: Ատենախոսի ուշադրությանն ենք ներկայացնում դրանցից մի քանիսը.

1. Կարծում ենք հաջող չի ներկայացված թեմայի արդիականությունը: Մակերեսային և ինչ-որ առումով անորոշ է ատենախոսի այն հարցադրումը, թե «նրա գործունեության քննությունն ու վերլուծությունը մեծապես կնպաստի անցյալի որոշ իրադարձությունների պատճառահետևանքային կապերի ըմբռնման ու գնահատման միջոցով Հայ առաքելական եկեղեցու տեղի, դերի և նշանակության նորովի արժևորմանը, առկա քաղաքական, հանրային, կրոնական մարտահրավերներին դիմակայելու կարողություններ-

րի ձևավորմանը»: Կարելի էր բացել փակագծերը և մատնանշել, թե ինչ է հասկանում եկեղեցու դերի նորովի արժևորում ասելով, թե Խ. Մուրադբեկյանի գործունեության հետ համեմատած որը պետք է լինի եկեղեցու դերն այսօր:

2. Արհեստական է հնչում ատենախոսության մեթոդաբանության մասին հետևյալ ձևակերպումը. «Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմավերլուծական, պատմահամեմատական, պատմահամակարգային, ռետրոսպեկտիվ (հետահայաց) մեթոդները»: Կարծում ենք խոսք կարող է գնալ միայն պատմավերլուծական մեթոդի մասին:

3. Գիտական նորույթի վերաբերյալ շարադրված ութ կետերը բնավ չեն ներկայացնում այդ նորույթը: Այն թերևս կարելի է ներկայացնել միայն 3-րդ կետով, որն է՝ «Նորահայտ վավերագրերի ուսումնասիրության հիման վրա վերագնահատվել են Խորեն Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեության վաղ շրջանը, Երևանի փոխթեմակալության նախապատերազմյան տարիները, կարևորվել է նրա ոչ միայն եկեղեցաշինական, այլև դպրոցաշինական, սոցիալական խնդիրների լուծմանը միտված գործունեությունը»:

4. Ատենախոսը նշում է, որ Խ. Մուրադբեկյանի վերաբերյալ տարածված բանսարկությունների ֆոնին Գևորգ Ե կաթողիկոսը դիմում է Ի. Վորոնցով-Դաշկովին, ստանալու թույլտվություն՝ նրա փոխարեն Երևանի փոխթեմակալ նշանակելու Բագրատ եպս. Վարդազարյանին (էջ 39): Դրանից հետո ատենախոսն արձանագրում է, որ փոխարքայի դրական պատասխանը ստանալուց հետո կաթողիկոսն, այնուհանդերձ տեղի չի տալիս անհիմն բամբասանքներին և գնահատելով Խորեն եպիսկոպոսի անձնվեր աշխատանքն ու նվիրումը հայ ժողովրդին, հրաժարվում է իր որոշումից: Անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ կաթողիկոսը հրաժարվեց իր որոշումից, առավել ևս, որ ստացել էր փոխարքայի համաձայնությունը: Ընդհանրապես, ատենախոսը թռուցիկ է անդրադառնում մամուլում Խորեն եպիսկոպոսի վերաբերյալ հրապարակված բանսարկություններին՝ դրանք լոկ որակելով անտեղի: Մինչդեռ այդ հարցին խորամուխ լինելը և դրա պարզաբանումը կարևոր է՝ թե՛ ժամանակի հասարակական կարծիքը թելադրող առանձին իրողությունները, թե՛ հասարակական-եկեղեցական շրջաններում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը ընկալելի դարձնելու առումով:

5. Խորեն Մուրադբեկյանի բարենորոգչական գործունեությունը լուսաբանելիս ատենախոսը թռուցիկ է անդրադառնում եկեղեցու ներքին բարենորոգման հարցերում

նրա որդեգրած դիրքորոշմանը, մինչդեռ նա եղել է 1937 թ. օգոստոսի 1-ին եկեղեցու նվիրապետական աթոռներին ու թեմերին ուղարկված կաթողիկոսական կոնդակում տեղ գտած բարեեռոգումների նախագծի նախաձեռնողներից մեկը: Հիշատակելով նշված նախագծի ուղարկման մասին (էջ 144)՝ ատենախոսը չի պարզաբանում, թե ինչ բարենորոգումների մասին էր խոսքը: Եթե նկատի առնենք, որ դա վերաբերում էր դեռ Կարապետ Տեր-Մկրտչյանի, ապա Երվանդ Տեր-Մինասյանի, Բաբկեն Կյուլեսերյանի, Գրիգորիս վրդ. Պալաքյանի, Թորգոմ Գուշակյանի և այլոց կողմից զարգացվող գաղափարներին, այսինքն՝ բարենորոգչական մի ամբողջական շարժման, որի ջերմ կողմնակիցն էր Խորեն Մուրադբեկյանը, ապա նախագծի բովանդակային ներկայացման դեպքում կպարզաբանվեր նաև եկեղեցու ներքին բարենորոգության հարցում Խորեն Ա. Մուրադբեկյանի որդեգրած դիրքորոշումը, ինչից ատենախոսությունն էապես կշահեր:

Ի դեպ, եզրակացություններում ևս, նշելով, որ «Նա ժամանակի առաջադեմ լիբերալ գործիչ էր և կողմ էր եկեղեցու բարեկարգմանը՝ ժամանակի պահանջին համապատասխան» (էջ 173), հեղինակը չի պարզաբանում, թե որոշակի ինչ էր ենթադրում այդ բարեկարգումը: Այդ թերացումն, անշուշտ, չէր լինի, եթե ատենախոսն օգտագործած լիներ Խաչիկ Ռաֆֆի Ղազարյանի «Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին» (Երևան, 1999) աշխատությունը, որտեղ հարցը հանգամանալից լուսաբանված է (էջ 254-276): Չնայած նշված աշխատությունն ընդգրկված է ատենախոսության՝ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում, բայց ատենախոսի կողմից պատշաճ չի օգտագործվել:

6. Եզրակացությունների 12-րդ կետում նշված է, որ «1934 թ. հուլիսի 20-ի կոնդակով Սփյուռքում վերահաստատելով հայրապետական նվիրակի պաշտոնը՝ նա կարողացավ վերջ դնել Սփյուռքում տիրող պառակտիչ, կուսակցական պայքարին»: Այդ տեսակետը շարադրանքում հիմնավորված չէ և չէր կարող հիմնավորվել, քանի որ Սփյուռքում այդ պայքարին երբևէ վերջ չի դրվել: Թերևս կարելի էր այլ ձևակերպում օգտագործել, օրինակ՝ «ջանում էր վերջ դնել» կամ «նպաստեց» այդ պայքարի մեղմացմանը:

7. Եզրակացությունների 16-րդ կետում (էջ 175-176) նշվում է, որ խորհրդային իշխանության վերնախավն իր առջև նպատակ չէր դրել կաթողիկոսին սպանելու, մինչդեռ շարադրանքում դիտավորյալ սպանության վարկածն ատենախոսը մյուս երկու

վարկածների հետ նույն հավանականության տեսանկյունից է դիտարկում: Այսինքն՝ եզրակացությունը հիմնավորված չէ:

Այնուամենայնիվ, նշված դիտողությունները չեն ստվերում կատարված աշխատանքը, ուստի ամբիոնը գտնում է, որ Ք. Հայրապետյանը կատարել է լուրջ և նշանակալի աշխատանք Խորեն Մուրադբեկյանի կյանքի և գործունեության համակողմանի ուսումնասիրության առումով՝ շրջանառության մեջ դնելով նոր փաստեր և վավերագրեր, ձևավորելով նոր պատմագիտական հայեցակարգեր:

Որոշեցին – ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Քանաքարա Հայրապետյանի «**Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը (1901-1938 թվականներին)**» ատենախոսությունը հաջողված, զգալի պատմագիտական արժեք ունեցող ուսումնասիրություն է, որն ամբողջական պատկերացում է տալիս նրա ողջ գործունեության վերաբերյալ:

բ) Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **Է.00.01 «Հայոց պատմություն»** մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄ. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
Պ.Գ.Դ., ՊՐՈՖ.՝ Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. Հովհաննիսյան

17.01.2024 թ.